այնպիսի հոգեկան մի կենդանութիւն է տալիս, այնպիսի մի ջերմութիւն, որի նմանը ես զգացած չեմ երբեք:

Դժբախտ Պասկալը իր ուրացումը տարել է Մոնտէկառլո եւ Աստուծոյ հետ խաղ է խաղում, իսկ դուք, ձեր ուղեղը կահաւորել էք ամերիկեան, զաղութային այդ մարդկութեան, չինարարական երազով: Որովհետեւ դուք վախում էք պարապից եւ վախում էք մահից: Զէ՞ք զգում, որ այս երկիրը տաք է, որ նրա դարաւոր շերտերի տակ բոցերի ծալքեր են դիզուած, որ ամէն մի քար հնչուն է, եւ տարածուած այս երաժշտութիւնը աւելի կեանք է քան այն, ինչ որ մենք անուանում ենք կեանք:

Ինչպէ՞ս ձեզ բացատրեմ... Ինչ որ ասում եմ կարելի է միայն զգալ: Ֆիզիքապէս: Այնպէս, ինչպէս մարդ զգում է սիրած կինը՝ ամբողջ իր մարմնի սարսուռով, ամբողջ սրտով. էութեան թաքնաթաքուր այն զգացումով, որը անուն չունի, որովհետեւ զգայութեան բեւեռից այն կողմն է: Եւ եթէ այդ զգացումը չկայ՝ ոչինչ չկայ. եւ ոչ մի թուաբանական հաշիւ, ոչ մի տրամաբանութիւն չի կարող պարապը լեցնել: Կամ այս կամ այն: Կամ պէտք է փախչել, ուրանալ, կամ պէտք է խոնարհաբար ընդունել եւ լարել իր ներքին ականջը, բաց անել ներքին աչքը եւ ապրել ոսկրուտ այս լաւայի, աղքատ մացառներով ծածկուած այս թմբերի միւս, իրական կեանքով: Մենք դժբախտ ազգ ենք, եւ դժբախտ է նաեւ մեր երկիրը, որովհետեւ հայկական լեգենդան իր գոյացման ձեւը դեռ գտած չէ: Ես հաւատում եմ, որ ամէն մի երկիր եւ ամէն մի ազգ ծնուած են իրականացնելու որոշ մի ճակատագիր: Սառած հողակոյտերի տակ, բարձրարերձ լեռների կատարին, աղմկօրէն փչբուող գետերի հայելիի մէջ, ժանգոտած ժայռերի կրծքին, լճերի ներս քաշուած մելամաղձոտութեան ծոցին, հայկական երկու հոգեկանների՝ Ախթամարի եւ Սեւանի մէջ տարածուող բովանդակ աշխարհի մասերում՝ թառած է անհանդիստ, եռ եկող մի երգ եւ թառած են մեծդի աստուածներ, որոնց ձայնը ես լսում եմ, որոնք ուզում են ապրել, սակայն, մենք չենք կարողանում գտնել նրանց գոյացման ձեւը: Ինչէ՞ն գիտէք, բարեկամ, ինչէ՞ն գիտէք, որ նոյն Գրաալի սկիհը, խորհրդաւոր այդ ճառագայթումը, որի համար քաջ եւ արկածախնդիր ասպետներ աշխարհէ աշխարհ ընկան, պղնձէ քաղաքների խուլ դուռերը զարկին, արծաթէ սուրերով թանձր գիշերներ հարուածեցին,— ինչէ՞ն գիտէք, ասում եմ, որ հէնց այստեղ, մեռնող արեւի կարմիր հառաչի տակ զուսպ եւ խուլ պառկած այս լիճի մէջ չէ թափուած:

— Գրաալի սկիհը հին մի առարկայ է որեւէ թանգարանում զետեղուած:

— Թո՛ղ լինի հին մի առարկայ: Հին առարկաները յօրինուածքներ են, որոնց մէջ ժամանակը եւ քնութիւնը ամբարած են որոշ զօրեղութիւն. նրանք ժամանակի ընթացքին վերակերպւում են եւ մարդկային մարմնի պէս մեծ ուժի առատ աղբիւր են դառնում: Հի՛ն առարկայ, ասում էք արհամարհանքով, հի՛ն առարկայ... Այսօր, Սեւանայ կղզու վրայ, մաշուած ու չքաւոր մատուռի առջեւ ես իրական կենդանութիւն տեսայ: Ես տեսայ մի-ակ կենդանի էշը որը ապրեցնում է ջլատուած եւ ահաբեկ այս երկիրը: Եղածը ի՞նչ է՝ մի քանի խարխուլ քարեր եւ, սակայն, նրանք կրում են իրենց ուսերի վրայ ահաւոր մի բեռ՝ դարերի բեռը եւ խորհուրդների հաւասակըշռութիւնը: Եթէ մի օր այդ խարխուլ քարերը վայր ընկնեն եւ անձրեւ ու մրրիկի ծեծի տակ, ջերմութեան, ոսթի լուծիչ աւերով հիւանդ, փոշիանան՝ մեր լեռները կը սկսին երերալ, լիճը վար կը թափուի, դաշտը կ՝անդնդանայ, եւ մենք հայերս կը վայրենանանք:

— Ուրեմն, ըստ ձեզ, մենք պէտք է մընանք կառչած բոլոր հնութիւններին, պէտք է պաչտենք քարերը, անմշակ թողնենք մեր հողերը, հրաժարուենք մեր չինարարական աշխատութիւնից եւ՝ տարուած բնազանցական ձեր երազով՝ գնանք որոնելու մի ինչ որ Գրաալի սկիհ, մշուշապատ ու բանաստեղծական մի ինչ որ երկրում: Դուք մեռելութիւն էք քարոզում...

Բարեկամս զայրացել էր: Մութ էր եւ ցուրտ:

Հեռում քառակուսի ստուերներ էին երեւում:

Հայ մատենագրութեան թուանշանային գրադարան